



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Սարսոս 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անփուն Պահապանդ է ան:
Արդարեւ ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տէրը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ո՛չ ցերեկ ատեն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ո՛չ ալ լուսինը՝ գիշեր ատեն:
Տէրը ի՛նք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունդ դուրս ըլլաս թէ ներս՝
Տէրը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան:

ՇԱՐԱԿԱՆ ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատէր Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԻՍԱՀԱԿ ՅԱԿՈՒԲԸ ԼԱԲԱՆԻՆ ԿՐ ՂՐԿԷ (27:46)

Պատմությունը շարունակուելով, Ռեբեկա այսպէս կ'արտայայտուի. «Քերի աղջիկներուն պարճառաւ հոգիէս զգուեր եմ»: Այս արտայայտութիւնը ինքնին ցոյց կու տայ Քերի աղջիկներուն վերաբերմունքը եւ նկարագրային գիծերը, ինչպէս նաեւ անոնց բարոյական անբումը, որոնք զգուանք պարճառած էին Ռեբեկային: Անոր համար ալ կը զգուշացնէ, որ չըլլայ թէ Յակոբն ալ նոյն ընթացքին հետեւի:

Իսահակ անգամը մը եւս կ'օրհնէ Յակոբը եւ աստուածային օրհնութիւնը կը հայցէ, որպէսզի Ամենակարող Աստուածը Աբրահամին օրհնութիւնը տայ: Ահա այդ նոյն օրհնութիւնն է որ կը շարունակուի: Սա ցոյց կու տայ Աստուծոյ հաւատարմութիւնը հանդէպ իր տուած խոստումին:

ՅԱԿՈՒԲԻՆ ԵՐԱԶԸ ԲԵԹԷԼԻ ՄԷՉ (28:10-22)

Աստուած աւելի ուշ ժամանակի մը մէջ յայտնուեցաւ Յակոբին, որովհետեւ ան իր հօր օրհնութիւնը նոր պացած էր եւ խաբեայութեամբ: Աստուած այս ձեւով ցոյց կու տայ թէ ինք վաւերացուցած է այդ օրհնութիւնը:

Յակոբի տեսիլքը, եթէ արձանագրուած է Աստուածաշունչի մէջ, կը նշանակէ, որ թէ՛ իր ժամանակի եւ թէ՛ հետագայ սերունդներու համար ունի իր իւրայայտուկ նշանակութիւնը: Ամմիջական պատասխանը արդէն Աստուծոյ բառերուն մէջ գործնապէս կը յայտնուի. երկինքը երկիրն հետ կապ ունի, այնպէս՝ ինչպէս Յակոբի տեսիլքին մէջ երեւցած սանդուխները իրարու կապած են այդ երկուքը:

Այդ սանդուխը կ'ուզէ ցոյց տալ, որ անխզելի կապ մը կայ երկինքին եւ երկրին, Աստուծոյ եւ աշխարհին միջեւ, եւ Յակոբի կեանքի իւրաքանչիւր քայլափոխին Աստուծոյ ներկայութիւնը կայ, այնպէս՝ ինչպէս Աստուած անոր ըսաւ, որ պիտի չձգէ եւ պիտի պաշտպանէ Յակոբը: Հրեշտակներու ներկայութիւնը, թէ Հին եւ թէ Նոր Կրակարաններու մէջ մարդուն վրայ Աստուծոյ ունեցած պարշտպանութիւնը կը ցուցնէ. երբ Աստուած իր հրեշտակը կը դրկէ, ասիկա մեզ առաջնորդելու եւ պաշտպանելու համար է:

Աստուած տեսիլքով Յակոբին քանի մը ճշմարտութիւններ կ'ուզէր ցուցնել անոր կեանքի այն հանգրուանին, երբ նոր պիտի կանչուէր Աստուծոյ եւ տակաւին Աստուծոյ գործիքը չէր:

Սանդուխը երկնքին եւ երկրին կապն է, որուն վրայ կեցած է Տէրը: «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ասկէ յետոյ պիտի տեսնէք երկինքը բառուած եւ հրեշտակները որ կ'ելլեն ու կ'իջնեն Մարդոյ Որդիի վրայ» (Յովի 1.51):

Քրիստոս յաւելում եւ ճշդում մը կը կատարէ: Երկինք հասնելուն համար Քրիստոս ինքն է ճանապարհը. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը»: Այդ ճամբան բանալուն համար, Քրիստոս Աստուծոյ կամքին բերած ճանապարհը ընտրեց, որ խաչի ճանապարհն էր, որովհետեւ խաչն էր իր փառաւորութեան եւ փառքին նշանը: Նոր Կրակարանի ճշդումները կու գան ըսելու, որ սանդուխի վերելը կանգնած Տէրը Ինքը Քրիստոսն է, որուն հրեշտակները կը սպասարկեն ծնունդէն սկսեալ, մինչեւ մկրտութեան ժամանակ, անապատին, Գեթսեմանի պարտէզին մէջ, խաչին վրայ եւ անկէ ետք:

(Ծն 28. 15). Ահա Ես քեզի հետ եմ ու ամէն ուր որ երթաս քեզ պիտի պահեմ ու քեզ այս երկիրը դարձնեմ. քանզի մինչեւ որ Իմ քեզի ըսածս չընեմ, քեզ պիտի չթողում:

Առաջին, Աստուած կ'ուզէ ցոյց տալ, թէ Ինք փիեզերական է: Թէեւ Ինք կը յայտնուի Բէթելին մէջ, տեղ մը, բայց տեսիլքի եւ երազի մէջ յայտնուելով եւ միաժամանակ այն խօսքով, որ կ'ակնարկէ. «Ես քեզի հետ եմ ու ուր որ երթաս քեզ պիտի պահեմ...», կ'ուզէ Յակոբին մտքին մէջ ճշդում մը ընել, որ այդ վայրկեանին Յակոբն է իր գերդաստանի նահապետը: Աստուած, այսպիսով, յայտնած կ'ըլլայ Յակոբին, որ ինք միայն Պաղեստինի կամ որոշ վայրի մը Աստուածը չէ, այլ Յակոբ աշխարհի որ ծայրն ալ երթայ, Աստուած իրեն հետ է: Աստուած ամէն տեղ է եւ անոր իշխանութիւնը սահման չունի. ասիկա կը կոչուի Աստուծոյ փիեզերականութիւնը:

Երկրորդ, ռեւէ ցեղի կամ ընտանիքի զաւակներուն համար, Աստուած կը ներկայանայ իբրեւ իր հայրերուն Աստուածը, եւ անձը ինք Աստուծոյ հետ անմիջական կապ չունի որքան արեւն, որ պատասխանատու դիրքի մը վրայ չէ: Գերդաստանի գլուխը եղողը Աստուծոյ հետ կապ ունի եւ միւսները, պարզապէս, հետեւողներ են անոր: Հետեւաբար, տեսիլքը այն պահն է, որ Աստուած ըսել կ'ուզէ, թէ ոչ միայն Ինք Յակոբին հօր Աստուածն է, այլեւ այդ պահէն սկսեալ՝ Յակոբինը, եւ անմիջականօրէն կապ մը ստեղծուեցաւ Իր եւ Յակոբին միջեւ:

Երրորդ, Աստուած եթէ փիեզերական է, ինչո՞ւ Յակոբին յայտնուեցաւ Բէթելի մէջ, յայտուկ վայրի մը մէջ, որուն առնչութեամբ Յակոբ տուաւ երկու շար յայրկանշական բացատրութիւններ. «այստեղ Աստուծոյ Տունն է» եւ «հոս երկինքի դուռն է»: Աստուած փիեզերական է եւ կը մնայ: Բայց, մարդ արարածը Աստուծոյ հետ հանդիպելու համար նիւթեղէն կերպերու պէտք ունի եւ երբեմն այդ նիւթեղէն կերպերը կը սքիպեն, որ մարդը որոշ վայրերու մէջ հանդիպի Աստուծոյ, եւ ուր որ կը հանդիպի, այնտեղ կը ստանայ սուրբ հանգամանք մը: Նոյնը կրնանք գտնել Մովսէս մարգարէի պարագային, երբ պիտի վառուող մորենիին դիմացը կանգնէր: Հողը, վայրը ինքնին սուրբ չէ, բայց որովհետեւ Աստուած հոն կը յայտնուի, սրբազան նշանակութիւն կը ստանայ:

Բեթելը երբայեցի ժողովուրդին պաշտամունքին մէջ, յարուկ սրբավայր եւ պաշտամունքի կեդրոն դարձաւ, բայց ոչ թէ իբրեւ ժողովուրդի կողմէ առնուած քայլ մը, այլ՝ Աստուծոյ կողմէ իսկ թելադրուած: Հեթազային պիտի տեսնենք (Թուոց, Երկրորդումն Օրինաց), որ Աստուած կ'ուզէ մարդիկ զինք պաշտեն իր ցոյց տուած վայրերուն մէջ: Աստուած տեղ մը կ'ընտրէ իրեն պաշտամունքին համար եւ հեթազային այդ ընտրութիւնը կեդրոնացաւ Միոն լեռան վրայ. կը նշանակէ, թէ Աստուծոյ համար տեղը կարեւորութիւն ունի, ո՛չ թէ տեղը սկիզբէն բացառիկ ըլլալուն պարճառով, այլ բացառիկ կ'ըլլայ անով, որ Աստուած ինք կ'ընտրէ այդ վայրը. ճիշդ այնպէս՝ ինչպէս Աստուած մարդիկը կ'ընտրէ իբրեւ մարգարէ, առաքեալ, ո՛չ թէ անոր համար, որ անոնք բացառիկ մարդիկ էին, այլ անոնք կարեւորութիւն ստացան Աստուծոյ ընտրութենէն ետք, երբ զանոնք յարուկ պաշտօնի մը կոչեց:

Ի՞նչ կերպով տեսիլքի վայրը երկինքի դուռ կ'ըլլայ:

Դուռը երկու ուղղութեամբ կ'օգտագործուի: Կը նշանակէ, թէ Աստուած կրնայ երկիր իջնել, եւ միաժամանակ, մարդը կրնայ երկինք բարձրանալ: Դուռը կապ մըն է եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան կարելիութիւնը կը ցուցնէ: Յակոբ, շարերուն պէս, կրնար մտածել, որ Աստուած կայ իբրեւ արարիչ, բայց մեզի հետ կապ չունի: Մակայն, Աստուածաշունչի մտածողութեամբ, Աստուած Իր յայտնութեան մէջ մեզի հակառակը կ'ըսէ. Աստուած հեռու չէ աշխարհէն: Աստուած ոչ միայն փիեզերական է, ամենուրեք է, այլ նաեւ կ'ուզէ հաղորդակցիլ մարդուն հետ: Ասիկա, նախ, Աստուծոյ անձնական բնոյթէն կու գայ. Աստուած եթէ մեզի կը ներկայանայ մարդկային կերպարանքով, ոչ թէ անոր համար է որ մարդ է կամ մարդու կերպարանք ունի, այլ՝ մարդու հետ հաղորդակցելու կապ մը ունի: Աստուած մարդը իր պարկերովը ստեղծեց, որպէսզի կարենայ միշտ հաղորդակցութեան մէջ ըլլալ անոր հետ, իր կամքը յայտնել եւ մարդը իրեն կոչել: Այսպիսով, Աստուած Յակոբին գործնականօրէն կը սորվեցնէ, որ երկնքի եւ երկրին միջեւ կապերը խզուած չեն, եւ երբ որ մարդը ուզէ, կրնայ կապուիլ եւ հաղորդակցիլ երկինքին հետ, այնպէս՝ ինչպէս Աստուած երբ որ կամենայ՝ ինքզինք կը յայտնէ մարդուն:

Երկնքի դուռ բացապրութիւնը կը գտնենք մեր ծիսական լեզուին մէջ եւս. այս սահմանումը կու տանք եկեղեցիին, որ կը կոչուի նաեւ Տիրոջ տուն (Դռնբացէքի արարողութեան մէջ): Եկեղեցին Աստուծոյ հետ հանդիպման վայրն է, ուր մենք մեր ֆիզիքական վիճակին մէջ հաղորդակցութեան մէջ կը մտնենք Աստուծոյ հետ:

Եւ Յակոբ ուխտ ըրաւ ու ըսաւ. «Եթէ Աստուած ինձի հետ ըլլայ ու այս երթալու ճամբուս մէջ զիս պահէ ու ինձի ուրեւի ու հաց ու հագնելու հանդերձ փայ եւ իմ հօրս տունը խաղաղութեամբ դառնամ, Տէրը ինձի Աստուած թող ըլլայ»:

Գլուխի ասարտին կը տեսնենք որ Յակոբ պայման չի դնէր աստուածպաշտութեան, այլ արդէն իսկ քար մը կը կանգնէ եւ իւղով կ'օժէ զայն, որ հեթազային պաշտամունքային վայր պիտի դառնայ: Քար մը կանգնեցնելը բոլոր ժողովուրդներուն մէջ ընդունուած կերպերէն մէկն էր՝ այդ տեղը աստուծոյ մը անունով ճանչնալու (Մեն-հիրներ): Քարին վրայ իւղ թափելը, օժելը Աստուծոյ անունին կապել կը նշանակէ: Թերեւս իւղի գործածութեան առաջին յիշատակութիւնն է, ըսելու համար, որ ինչ որ Աստուծոյ կ'ընծայուի, օծումով պէտք է ընծայուի: Իսկ Բեթել քաղաքը որ կը նշանակէ Աստուծոյ տուն, հեթազային երբ երկիրը երկուքի բաժնուեցաւ (հարաւի եւ հիւսիսի) մրցակից դարձաւ նոյնիսկ Երուսաղէմի: